ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴԻՊՔ

Լորտ Կրէյ անգլիայի իշխանը :

ՅՈՒԼԻՍԻ 17ին վախճանեցաւ 82 տարեկան՝ Լորտ Կրէյ, որ Անգլիայի խիստ համբաւաւոր իշխաններէն մէկն էր, ու յիսուն տարիէն աւելի էր որ տէրութեան կառավարութեանը մէջ էր : Իրեն ցեղը խիստ հին է, և ինքը 1764ին ծնած էր. ուսմունքը կատարելագործեց Քէմպրիճի համալսարանին մէջ : Տասնրուրը տարուան եղած ատենը Եւրոպա պտտեցաւ Ճամբորդութեամբ՝ Քոմպէրլանտի դքսին հետ մէկտեղ, և օտար թագաւորաց ու իշխանաց առջևը շատ պատիւ գտաւ : 1786ին Անգլիա դարձաւ. և թէպէտ բաւական տարիք չունէր, բայց անդամ գրեցին զինքը հասարակաց խորհրդարանին : Յաջորդ տարին սկսաւ խորհրդարանին մէջ ատենաբանութիւններ ընել, և ան ատենէն յայտնի եղաւ իրեն սուր ու արթուն հանճարը : Փոքս անունով հռչակաւոր իշխանին մեռնելէն ետքը, 1806ին Լորտ Կրէյը անոր տեղն անցաւ ու եղաւ արտաքին գործոց վերատեսուչ : Իր ատենը գրուեցաւ ան օրէնքը որ դերեվաճառութեան գէշ սովորութիւնը վերցուի. և միայն ասոնց ալ բաւական էր Լորտ Կրէյին անունը անմահացընելու : Ան ատենի Անգլիացւոց տէրութեան վիճակը այնպէս էր որ Կրէյ երկար չկրցաւ մնալ իր պաշտօնին մէջ, ու մէյմը հրաժարեցաւ ետքը՝ շատ տարիներով յանձն չառաւ, թէպէտ և շատ աղաչեցին : Բայց 1830ին երբոր Վէլլինկթոնի խորհրդարանը քակուեցաւ, Կրէյ նորէն ձեռք առաւ տէրութեան կառավարութիւնը : — Բարձրահասակ էր ասիշխանը ու առողջ, կերպարանքը խիստ ազնուական, ձայնն ալ անուշ ու զօրաւոր. Ճարտասանութեանը կողմանէ համառօտախօս ու ճիշդ էր, ոճը մաքուր, ընտիր, և ամէն իմաստակութենէ հեռու. ուստի երբոր բան մը կը խօսէր՝ ամենուն մտիկ ընել կուտար :

Փորթլանդի անօթը :

Ան հռչակաւոր Փորթլանտի անօթը, որ քանի մը ամիս առաջ մէկը կոտրեր էր, մօտերս այնպէս աղէկ նորոգեր են՝ կտորները քովէ քով կպցընելով որ ամենևին ճեղք մը ալ չերևնար վրան կ'ըսեն :

Կորգէ դուրս ժամագրուրիւն :

Ամերիկացի Նոր Օրլէանս քաղաքին ձիընթացին մէջ Էլլըսուորթ անունով մէկը խօսք դրեր է մօտերս ուրիշներու հետ, որ 1000 ժամուան մէջ 1000 մղոն տեղ քալէ, մէկ ժամը մէկ մղոն. անանկ որ բոլոր քալուածքը գրեթէ 42 օր ու 42 գիշեր պիտի քշէ անընդհատ, ու հանգչելու կամ քնանալու համար ան կտոր ատենները միայն պիտի ունենայ՝ որ մէկ մղոն տեղ քալելէն ետև՝ մէկ ժամէն պիտի աւելցընէ : Անոր համար ինքը երկու ժամը մէյմը մէկ ժամ ու կէս կը հանգչի, ետքը մնացած մէկ քառորդին մէջ մէկ մղոն տեղ կ'երթայ, մէկալ քառորդին ալ նորէն մէկ մղոն մը : Ասկերպով սկսեր է եղեր իր քալուածքը, ու կ'ըսեն թէ տարակոյս չկայ որ գլուխ ալ կը հանէ : Յայտնի բան է որ այսպիսի տեսարան մը տեսնողներ խիստ շատ կ'ըլլան. բայց զարմանալին ասէ որ ինչպէս Անգլիացւոց յատուկ սովորութիւնն է՝ հարիւրաւոր մարդիկ գրաւ դրած են իրարու դէմ անբաւ ստակ, Էլլըսուորթ ասբան գլուխ կը հանէ ու չհաներ ըսելով. ուստի մասնաւոր երդուընցած մարդիկ ալ դրեր են որ իրեք իրեք ժամ փոփոխակի Էլլըսուորթին եռևէն երթան, ամէն մէկ ժամուն ճիշդ մէկ մղոն ճամբայ պահանջեն իրմէ, ու պէտք եղած բաները տան իրեն :

Հռոմայ վիճակագրութիւնը :

Հիմակուան սրբազան քահանայապետը Գրիգոր ԺԶ, երկու հարիւր յիսունութերորդ պապն է. ասա տարի սեպտեմբերի 18ին կը լրընցընէ ութսներորդ տարին և ութսունուվեցկը կը մտնէ : Ամոռը նստած է 1831ին : — Ծիրանաւորաց թիւը 55 է. ասոնցմէ երկուքը անուանեց Պիոս Է, եօթը Լէոն ԺԲ, քառասունուվեցը հիմակուան քահանայապետը : Ամենէն ծեր ծիրանաւորը 87 տարեկան է՝ Թատոնի անունով. և ամենէն երիտասարդն է Շվարցենպերկ՝ 36 տարեկան : — Հռոմայ ժողովրդեան թիւը 175,789 հոգի է՝ հրեաները չհամրելով :

Ցորդ անդրէնէր :

Ան միջոցին որ արևելքի կողմերը մեծ գանգատ կար չորութեան համար, արևմուտքը նոյն գանգատները լսուեցան անձրևներուն շատութեանը համար : Յուլիսի մէջ Իլվով քաղաքին քովերը ու Մաճառստանի մէջ այնչափ անձրև եկաւ որ շատ գետեր ու հեղեղատներ բարձրացան, ու ահագին ընդարձակութեամբ տեղեր կոխելով՝ շատ ու մեծամեծ վնասներ հասուցին : Շատ տներ կործանեցան, ճամբաներ աւրուեցան, կամուրջներ փլան, կենդանիներ խղդուեցան ու ինչուան մարդիկ ալ մեռան : Միայն Թարնովի գաւառին մէջ 100,000 հոգիի չափ ասփորձանքին պատճառաւը յետին աղքատութեան մէջ ընկան :

էջ	տող	սխալ	ուղիղ
251	42	հայի	հայիֆ

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ՂԱԶԱՐՈՒ